

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՏՁՀ-ՄԲՄ-ԱՇՁԲ-2025/10**

ք. Երևան

« 18 » հունիս 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏԵԽՆՈՍՏՐՈՅ» ՍՊԸ, «ԱՏՐՈՅՄՈՆՏԱԺ» ՍՊԸ և «ԱՐՄՍՎԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ **Կոնսորցիումն**, ի դեմս «ՏԵԽՆՈՍՏՐՈՅ» ՍՊԸ տնօրեն Վ. Ներսիսյանի, ով գործում է «ՏԵԽՆՈՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, ի դեմս «ԱՏՐՈՅՄՈՆՏԱԺ» ՍՊԸ տնօրեն Մ. Մեսրոպյանի, ով գործում է «ԱՏՐՈՅՄՈՆՏԱԺ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, ի դեմս «ԱՐՄՍՎԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ տնօրեն Տ. Առստամյանի, ով գործում է «ԱՐՄՍՎԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Շիրակի մարզի Ղարիբջանյան բնակավայրի մանկապարտեզի կառուցման» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՏՁՀ-ՄԲՄ-ԱՇՁԲ-2025/10 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթին (փաստաթղթերին), ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան՝ հաշվի առնելով դրանց տեղակապման արդյունքները: Կապալառուն ապահովում է նախագծանախահաշվային փաստաթղթերի տեղակապման նախագծման աշխատանքների կատարումը՝ օրենքով նման գործունեություն իրականացնելու թույլտվություն ունեցող անձի՝ «ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի միջոցով:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետը սահմանելով 420 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

Ընդ որում համաձայնագրով աշխատանքների կատարման ծավալները նախատեսվում են 12 ամսում կատարելու հաշվարկով՝ պայմանով, որ պակաս ֆինանսական միջոցները բյուջետավորվում և վճարումները կատարվում են 12 ամիսը լրանալուն հաջորդող մինչև 90 օրվա ընթացքում:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.1.8 Կապալառուի կողմից Պայմանագրով սահմանված կանխավճարը Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակով օգտագործված չլինելու դեպքի հայտնաբերման դեպքում Կապալառուից պահանջել 5 օրյա ժամկետում Պատվիրատուին վերադարձնելու պայմանագրով նախատեսված նպատակով չօգտագործված կանխավճարի գումարը:

3.1.9 Առաջարկել Կապալառուին կասեցնել կամ համարել կասեցված պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել **15 օրվա ընթացքում**: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր ետզանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.3.3 Առաջարկել Պատվիրատուին կասեցնել կամ համարել կասեցված պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **առնվազն 365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.3 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պատվիրատուին ներկայացնել կանխավճարի՝ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակային օգտագործումը հավաստող փաստաթղթերը՝ հաշիվ-պահանջագրերը, վավերագրերը, անդորրագրերը և այլն՝ Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 օրյա ժամկետում:

3.4.13 Բանկային երաշխիքի հետ միասին Պատվիրատուին ներկայացնել կանխավճարի օգտագործման պլանավորումը (ցանկ), որը ներառում է գնվելիք ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ ծախսերի անվանումները, քանակները և վճարման ենթակա գումարի չափը:

3.4.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կասեցվելու կամ կասեցված համարվելու դեպքում, եթե Պայմանագրի ժամկետի ավարտի օրը համընկնում է կասեցման ժամանակահատվածի հետ ներկայացնել ավելացված ժամանակահատվածի համար օրենսդրությամբ նախատեսված՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ դրամի ձևով ապահովումները՝ մինչև կասեցումը գործող պայմանագրային ժամկետի ավարտից առնվազն 10 օր առաջ, և եթե կասեցված ժամանակահատվածը չի գերազանցում Պայմանագրի մինչև կասեցումը գործող ժամկետը, ապա կասեցված ժամկետի ընթացքը վերսկսելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին

չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **287,700,000.00 (Երկու հարյուր ութսունյոթ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ**, որից 47,950,000.00 (քառասունյոթ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

Սույն պայմանագրի գինը գործոնային է: Գործոն է հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրը, իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվող գնի միջինացված ինդեքսը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կողմից նախորդող 12 ամիսների ընթացքում հրապարակված՝ «Գների ինդեքսը շինարարությունում» ինդեքսի միջինացված ցուցանիշը: Գործոնի փոփոխությամբ պայմանավորված՝ սույն պայմանագրի հիման վրա կնքված յուրաքանչյուր համաձայնագրով նախատեսված և պատվիրատուի կողմից ընդունված աշխատանքների գնի վերահաշվարկն իրականացվում և տարբերությունը կապալառուին վճարվում է համաձայնագրով նախատեսված աշխատանքները պատվիրատուի կողմից ողջ ծավալով ընդունվելուն հաջորդող 120 աշխատանքային օրվա ընթացքում: Գործոնը կիրառվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր համաձայնագրով նախատեսված աշխատանքները ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելուն նախորդող ամսվա համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված գների ինդեքսի միջինացված ցուցանիշը: Ընդ որում, հաշվարկների համար բազային գործոն է հանդիսանում տվյալ համաձայնագիրը կնքվելուն նախորդող ամսվա համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված ինդեքսը: Մինչև համաձայնագրով նախատեսված աշխատանքները ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելուն նախորդող ամիսը ներառյալ, միջինացված ցուցանիշը հավասար մնալու կամ մինչև 5 տոկոսը ներառյալ աճելու, կամ նվազելու դեպքում համաձայնագրի գնի վերահաշվարկ չի կատարվում:

3

Նախագծի տեղակապված մասի նախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների պայմանագրային արժեքը հաշվարկվում և դրանց մասով պայմանագիրը (համաձայնագիրը) կնքվում է հետևյալ բանաձևի կիրառմամբ՝ $ՎԳՏ = ԾԳՏ \times (ՄԳ/Գ)$, որտեղ՝

ՎԳՏ-ն տեղակապված մասի նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվելիք գումարն է,

ԾԳՏ-ն տեղակապված նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է,

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած գինն է,

Գ-ն գինն է:

Ընդ որում՝

-այս բանաձևի կիրառմամբ հաշվարկն իրականացվում է անմիջապես տեղակապման նախագծի մասով նախագծանախահաշվային փորձաքննություն անցած փաստաթղթերը պատվիրատուին հանձնելուց և դրանք վերջինիս կողմից ընդունվելուց հետո 10-օրյա ժամկետում, իսկ վճարումներն իրականացվում են դրանց մասով կնքված համաձայնագրի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան,

-պայմանագիրը (համաձայնագիրը) կնքվում է կապալառուի կողմից նախագծի տեղակապված մասի աշխատանքների կատարման արժեքի նկատմամբ հաշվարկված պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացվելու դեպքում,

-եթե պայմանագրի գինը գերազանցում է չտեղակապված նախագծի արժեքը, ապա սույն կետով նախատեսված բանաձևը չի կիրառվում, իսկ տեղակապված մասի աշխատանքների համար պայմանագիրը (համաձայնագիրը) կնքվում է փորձաքննված նախահաշվային արժեքով:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 28 770 000 /քսանութ միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կապալառուն ամբողջությամբ ապահովում է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի կողմից վճարված կանխավճարն օգտագործել Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակով: Միաժամանակ կապալառուն պարտավորվում է Պատվիրատուին բանկային երաշխիքի հետ միասին ներկայացնել կանխավճարի օգտագործման պլանավորումը (ցանկ), որը ներառում է գնվելիք ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ ծախսերի անվանումները, քանակները և վճարման ենթակա գումարի չափը:

Կապալառուի կողմից կանխավճարը Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակով օգտագործված չլինելու դեպքի հայտնաբերման դեպքում Պայմանագրով նախատեսված նպատակով չօգտագործված կանխավճարի գումարը ենթակա է վերադարձման Պատվիրատուին:

Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուին ներկայացնել կանխավճարը Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակային օգտագործումը (սարքավորումների, նյութերի ձեռքբերում, և այլն) հավաստող փաստաթղթերը՝ հաշիվ-պահանջագրերը, վավերագրերը, անդորրագրերը և այլն: Ընդ որում կանխավճար կարող է հատկացվել յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների համաձայնագրով նախատեսված արժեքի 30 տոկոսի չափով: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է համաձայնագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Ընդ որում, եթե կանխավճարը գերազանցում է 10 տոկոսը, ապա կանխավճարի մարման ենթակա գումարի վերջին չափին ավելացվում է հետևյալ բանաձևով հաշվարկված գումարը՝ $ԱԳ = ԿԾ * ՊՏ$

ԱԳ- ավելացվող գումար,

ԿԾ- պետության կողմից տրամադրվող կանխավճարի ծավալ, որը գերազանցում է 10%-ը,

ՊՏ-պետական տարեկան պարտատոմսերի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության մակարդակ*¹

5.2 Աշխատանքի գինը գործոնային է և կարող է փոփոխվել պայմանագրի 5.1 կետով նախատեսված կարգով:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQ = UQ / NQ \times 4D$, որտեղ՝

VQ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է):

NQ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

4D-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

4Q-ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք որի չափը սահմանվում է համաձայնագրով նախատեսված պահանջներին անհամապատասխան կատարված տվյալ կատարողական ակտի ընդհանուր գնի նկատմամբ և կազմում է կատարողականում տվյալ տողի (տողերի) գծով նախատեսված աշխատանքների արժեքի 10%-ը:

6.3.1 Պայմանագիրը 3.1.4 կետով նախատեսված կարգով լուծելու դեպքում կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով: 2

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3, 6.3.1 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ: Ընդ որում կապալառուի կողմից համաձայնագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում հաշվարկվող տույժերը պակասեցվում են կատարողականի դիմաց վճարվող գումարից՝ պայմանով, որ համաձայնագրով սահմանված աշխատանքների վերջնաժամկետի պահպանման դեպքում պահված տույժերի գումարը վճարվում է:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է

¹ հրապարակված է տեղեկագրի «Մեկ տարի մարման ժամկետով պետական կարճաժամկետ պարտավորումների կշռված եկամտաբերություն» բաժնում,

² Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Նախահաշվային գնի 0,05 % չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 0,1 % չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 0,1 % չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆԿԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (Ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների

հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կարող է կասեցվել կամ համարվել կասեցված աշխատանքների կատարման անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացվելու դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների պայմանագրով սահմանված աշխատանքների կատարումն անհնար է դարձել: Սույն կետի իմաստով՝ կասեցվող ժամանակահատվածը որոշվում է Պատվիրատուի կողմից և դրա մասին կողմերի միջև կնքվում է համաձայնագիր:

Պայմանագրի կապարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝

«Շինարարության իրականացում» լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	<p>2</p> <p>2.1 շինարարության իրականացում, 1-ին դասի լիցենզիա,</p> <ul style="list-style-type: none"> ✓ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ 1-ին կարգի ներդիր, հավաստագիր ✓ ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմեխանիկա) 1-ին կարգի հավաստագիր ✓ էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսա-վորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) 1-ին կարգի ներդիր, հավաստագիր ✓ ջերմագազա-մատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) 1-ին կարգի ներդիր, հավաստագիր <p>2.2 Տեղակայող կազմակերպություն, 1-ին դասի լիցենզիա,</p> <ul style="list-style-type: none"> ✓ ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմեխանիկա) 1-ին կարգի ներդիր, հավաստագիր ✓ էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսա-վորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) 1-ին կարգի ներդիր, հավաստագիր ✓ ջերմագազա-մատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) 1-ին կարգի ներդիր, հավաստագիր

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
 հիմնադրամ
 Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
 Կ.Ուլնեցու 31
 ՀՎՀՀ՝ 00846441
 Հ/Հ՝ _____


Կենտրոնական գանձապետարան
 Գործադիր տնօրեն
 Սարգիս Բաղինյան



/ստորագրություն/
 Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏԵԽՆՈՍՏՐՈՅ» ՍՊԸ	«ՍՏՐՈՅՄՈՆՏԱԺ» ՍՊԸ	«ԱՐՄՍՎԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան փ. 5	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լոր Լորք 7 զնգվ. շ. 29, քն. 24	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ- Զեյթուն 142, քն. 42
ՀՎՀՀ՝ 01063974	ՀՎՀՀ՝ 00524524	ՀՎՀՀ՝ 01063769
h/h 220250128083000	h/h 1150015124624633	h/h 1150010655035018
Բանկ՝ «ԱՎԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	Բանկ՝ «ԱՄԻՐՕ Բանկ» ՓԲԸ	Բանկ՝ «ԱՄԻՐՕ Բանկ» ՓԲԸ
Տնօրեն Վ. Ներսիսյան <i>[Signature]</i>	Տնօրեն Մ. Մեսրոպյան <i>[Signature]</i>	Տնօրեն Տ. Առաղուսյան <i>[Signature]</i>
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.



[Handwritten signatures and notes in blue ink]

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

**«ՀՀ Շիրակի մարզի Ղարիբջանյան բնակավայրի մանկապարտեզի կառուցման»
աշխատանքների կախարման**

NN	Նկարագրություն	Չ/Մ	քանակ	Միավորի գին (դրամ)			Ամբողջի գին
				Նյութեր	կատարում	ընդամենը	
				a	b	c	
1	Ճարտարապետական մաս						112,199,945
1	Պատեր Շենքի պատերի իրականացում կանոնավոր տուֆ քարով b=400մմ	մ3	210.0	30792.48		30,792	6,466,421
2	Շենքի պատերի իրականացում պեմզաբլոկով b=400մմ	մ3	5.2	25814.16		25,814	134,234
3	Շարվածքի ամրանավորում ցանցով ամրան 6A-1c	տ	0.425	711458.83		711,459	302,370
4	Տանիք Թումբեր կանգնակների տակ, բետոն B20 400x200	մ3	0.61	47101.88		47,102	28,732
5	Տանիքի փայտե էլեմենտներ (բացառությամբ կավարամածի)	մ3	13.53	239688.80		239,689	3,242,989
6	Քիվավահան տախտակներ 120x50մմ	մ2	70.30	6953.32		6,953	488,818
7	Հոսանոցի քիվավահան 120x50 մմ	մ2	69.60	6953.32		6,953	483,951
8	Տանիքի ծածկի իրականացումը մետաղակղմինդրով (կավարամածով)	մ2	607.44	13230.29		13,230	8,036,607
9	Տանիքի ջրհորդանների իրականացում փոշեներկված ցինկապատ թիթեղով, ճ=0,5մմ, տախտակամածի վրա, ներառյալ կախիչները	100գմ	0.574	1745845.57		1,745,846	1,002,115
10	Ջրի խողովակ գունավոր ցինկապատ թիթեղից ճ=0,5մմ, ϕ100	գմ	32.2	7807.8200		7,808	251,412
11	Տանիքի լուսամուտ	հատ	2.0	60835.34		60,835	121,671
12	Ցինկապատ փոշեներկված թիթեղից մանր ծածկույթներ Տանիքի ծածկի իրականացումը փոշեներկված հարթ թիթեղով	մ2	20.0	2489.74		2,490	49,795
13	Տանիքի ծածկի պիպի իրականացումը ճ=0,50մմ փոշեներկված ցինկապատ թիթեղով,	մ2	56.0	2617.04		2,617	146,554
14	Գոգնոց ներկ. ցինկապատ թիթեղից ճ=0,5մմ	մ2	41.5	2617.04		2,617	108,607
15	Հոսանոցի ճ=0.5 մմ ցինկապատ գունավոր թիթեղով	մ2	38.6	2617.04		2,617	101,018
16	Քիվի երեսպատում ճ=0.5 մմ ցինկապատ գունավոր թիթեղով	մ2	30.2	2617.04		2,617	79,035

7

17	Արցունքաթափի փոշեներկված ցինկ. պրոֆ. թիթեղ $\delta=0,5$ մմ, $b=250,500$ մմ	մ2	48.5	2617.04		2,617	126,926
18	Ամրանային ոլորք	տ	0.06	671882.08		671,882	40,313
19	Տանիքի կավարամածի հրապաշտպանություն	մ2	607.4	531.11		531	322,617
20	Տանիքի գոլորշամեկուսիչ շերտ (իզոգամ)	մ2	406.3	3226.67		3,227	1,310,996
21	Տանիքի ջերմամեկուսացում խարամով	մ3	131.0	8884.95		8,885	1,163,928
22	Ձնարգել $\delta=0,5$ մմ, $L=1250$	զմ	60.0	3615.19		3,615	216,911
23	Տանիքի մետաղական բազրիքի տեղադրում $h=600$ մմ	զմ	61.0	2226.96		2,227	135,845
24	Տանիքի մետաղական բազրիքներկում 2 անգամ հակակորոզիոն ներկով	տ	0.190	16088.76		16,089	3,057
25	Մետաղական մտոց կափարիչ - 0,0283տն, ներդիր էլեմենտ ՄՄ-1* - 0,0365տն)	տ	0.065	98314.53		98,315	6,371
26	Մետաղական մտոցի արժեքը	տ	0.065	671882.08		671,882	43,538
27	Մետաղական մտոցի ներկում 2 անգամ հակակորոզիոն ներկով	տ	0.065	16088.76		16,089	1,043
28	Մետաղական Աստիճան	տ	0.0290	188852.15		188,852	5,477
29	Մետաղական Աստիճանի արժեքը	տ	0.0290	671882.08		671,882	19,485
30	Մետաղական աստիճանների ներկում 2 անգամ հակակորոզիոն ներկով	տ	0.029	16088.76		16,089	459
31	Պատուհաններ 60մմ այլումինե սպիտակ պրոֆիլներով, երկշերտ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ//բացվող /կորագիծ/	մ2	40.4	102775.56		102,776	4,152,133
32	60մմ այլումինե սպիտակ պրոֆիլներով, երկշերտ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ// /չբացվող /կորագիծ/	մ2	28.4	57557.02		57,557	1,634,619
33	60մմ այլումինե սպիտակ պրոֆիլներով, երկշերտ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ//բացվող / ուղղանկյուն/	մ2	18.54	102775.56		102,776	1,905,459
34	60մմ այլումինե սպիտակ պրոֆիլներով, երկշերտ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ// /չբացվող // ուղղանկյուն/	մ2	5.6	57557.02		57,557	322,319
35	Պատուհանագոգի խարժեքը $d=400$ մմ	զմ	54.9	5106.80		5,107	280,363
36	Արտաքին պատուհանագոգի իրականացում բազալտե 200x50(h)մմ կտրվածքի քարով 51գծ.մ	մ2	10.1	15985.85		15,986	161,457

37	Դռներ Այլումինե ապակեպատ վիտրաժի տեղադրում ջերմակամրջակով, որից անշարժ 12մ2 (ներառյալ ամրացման կանգնակները և դետալները)/տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ//	մ2	15.90	118901.69		118,902	1,890,537
38	գունավոր թաղանթ ապակիների համար	մ2	6.20	3554.56		3,555	22,038
39	Այլումինե գունավոր ապակեպատ դռան տեղադրում ջերմակամրջակով, որից անշարժ 3,0մ2 (ներառյալ ամրացման կանգնակները և դետալները)/տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ//	մ2	6.20	75476.57		75,477	467,955
40	Այլումինե, արտաքին, ջերմակամրջակով, ապակեպատ դռան տեղադրում, տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ//	մ2	21.10	75472.85		75,473	1,592,477
41	Մետաղապլաստե ս/հ դռներ որից անշարժ վերնափեղկը 2քառ.մ	մ2	7.10	75472.85		75,473	535,857
42	ՄԴՖ, ապակեպատ (ներառյալ սարքեր, սարքավորումները)	մ2	46.4	57480.32		57,480	2,668,236
43	ՄԴՖ, խոլ (ներառյալ սարքեր, սարքավորումները)	մ2	38.5	50510.58		50,511	1,944,657
44	Մետաղական դուռ ,մետաղական ճաղավանդակով	մ2	3.6	151995.89		151,996	547,185
45	Դռան արգելակիչներ բացվող դռների համար	հաստ	75	8961.08		8,961	672,081
46	Հատակներ Հատակների տակ գրունտի տոփանում խճով	մ2	320.9	345.41		345	110,842
47	Հատակների նախապատրաստական շերտի իրականացում խճով 100մմ հաստ.	մ3	32.09	14562.46		14,562	467,309
48	Հատակների բետոնե ենթաշերտի ամրանավորում 320.9քառ.մ	տ	0.3	23363.96		23,364	7,009
49	4Bբլ ամրան Բ.150x150	մ2	320.9	1112.62		1,113	357,040
50	Հատակների խարամբետոնե ենթաշերտ 140մմ հաստ.	մ3	56.20	42171.87		42,172	2,370,059
51	Հատակների ենթաշերտ 100մմ հաստ.	մ3	32.10	44170.95		44,171	1,417,888
52	Ջրամեկուսացում իզոգամով 1 շերտ ներառյալ պատերի կողքով/	մ2	429.1	4624.56		4,625	1,984,399
53	Հատակի տակ հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով միջ. 30մմ հաստությամբ	մ2	333.40	1642.10		1,642	547,476
54	Հատակի տակ հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով միջ. 40մմ հաստությամբ	մ2	566.70	2114.17		2,114	1,198,100
55	Վինիլային հատակի իրականացում 2մմ հաստ, շրիշակների հետ միասին	մ2	370.1	16156.29		16,156	5,979,443
56	Լամինատե հատակի իրականացում սպունգի և սոսինձի հետ միասին	մ2	17.7	8280.27		8,280	146,561

	12,մմ						
57	Չսահող խեցեսալերով հատակի իրականացում	մ2	109.1	7407.94		7,408	808,206
58	Մամլագրանիտե սալերով հատակի իրականացում	մ2	398.7	9627.40		9,627	3,838,444
59	Խեցեսալե շրիշակների իրականացում 100մմ բարձրության	զմ	73.3	1067.79		1,068	78,269
60	Մամլագրանիտե շրիշակների իրականացում 160մմ բարձրության	զմ	14.5	1295.61		1,296	18,786
61	Մամլագրանիտե շրիշակների իրականացում 100մմ բարձրության	զմ	286.0	1295.61		1,296	370,544
62	Ներքին հարդարման աշխատանքներ Պատերի բարձրորակ սվաղում գաջի շաղախով	մ2	1664.3	5328.19		5,328	8,867,707
63	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	մ2	1725.5	1895.53		1,896	3,270,737
64	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով ցանցի վրայից հախճասալի տակ	մ2	289.0	2308.59		2,309	667,183
65	Պատերի լավորակ ներկում յուղաներկով լավորակ 2 անգամ	մ2	190.5	1258.08		1,258	239,664
66	Պատերի երեսապատում հախճասալով	մ2	289.0	7446.40		7,446	2,152,010
67	Առաստաղի գաջի բարձրորակ սվաղ	մ2	816.8	6555.54		6,556	5,354,565
68	Առաստաղի բարձրորակ ներկում լատեքս ներկով	մ3	833.5	2241.87		2,242	1,868,599
69	Առաստաղի լավորակ ներկում յուղաներկով լավորակ 2 անգամ	մ2	36.5	1325.36		1,325	48,376
70	Կախովի առաստաղ «Արմսթոնգ» տիպի սալերից /ներառյալ ամրացման դետալները/	մ2	57.3	6235.54		6,236	357,296
71	Դռների և պատուհանների շեպերի գաջի սվաղ	մ2	124.1	6229.53		6,230	773,022
72	Դռների և պատուհանների շեպերիբարձրորակ ներկում լատեքսային ներկով մածիկապատումով	մ2	124.1	1895.53		1,896	235,235
73	Պատուհանի և պատուհանագոգի տակ լիցք հարթեցնող շերտով 3սմ հաստ	մ2	0.69	1426.03		1,426	984
74	Մանկական սանհանգույցներում լամինատե միջնորմների և դռնակների իրականացում (ներառյալ ամրացման դետալները)	մ2	29.00	21906.11		21,906	635,277
75	Նիկելապատ դեկորատիվ կանգնակ Փ32	զմ	55.0	3735.78		3,736	205,468
76	Ծխնի	հատ	42.0	3735.78		3,736	156,903
77	Բռնակ-փական	հատ	14.0	4878.81		4,879	68,303
78	Շերտավարագույր	մ2	108.5	6272.76		6,273	680,594
